

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐԻՒՄ

Արտաքին իրաւոր մէջ կարգում ենք հետեւեալ տեղեկութիւնները: Հետադիւր հաղորդեց, որ մահուան պատժի դատաւարութիւնը սուլ-թանի փեսաները բաժանաւ են իրանց կանանցից: Այդ փաստից կարելի է եզրա-կացնել, որ սուլթան Աբդուլ-Ազիզի սպա-նոյնը կամ մահուան պատժի կենթարկ-վին, կամ կալանաւորութիւն կը լինեն իրանց ամբողջ կեանքի ընթացքում և կամ թէ կաքորովեն: Արեւի անգամները, երբ որ և է սուլթանի քոյրերի ամուսնները աքսորան-քի են դատաւարութիւն, նրանց չեն բաժա-նել իրանց ամուսնիկներէ: Կրանից երեւում է, որ դատաւարութիւններ լինելու շատ փառ է: Կժուար է քննել Կ. Պոլսի դատարանի վճռի իրաւացիութիւնը: Կուէ՛ք այդ վը-ճիւրը հիմնոված է կատարելապէս հաստատ և ակնհայտ փաստերի վրա, բայց դատաւ-տանական գործը արդարութեամբ բաւական-նութիւն տալու և յանցանքը պատժելու համար չէ սկսված: Միահաղ-փառաւ և նրա համախոհները դատաստանի ենթարկվեցան քաղաքական պատճառներով: Սուլթանի այժմեան խորհրդատուները և բարեկամ-ները հաստատեցին են նրան, որ նա անկա-րող է հանգիստ մնալ իր գահի վրա, քա-նի որ կենդանի են Միահաղ և Մահմուդ-Կամադ փառաների պէս մարդիկ և քանի որ նրանք միջոց ունեն պալատական դաւա-դրութիւններ կազմել: Չափազանց փառա-սէր Միահաղ-փառաւ և չափազանց ագահ Մահմուդ-Կամադ-փառաւ փառաները երբեք սուլթանի համար, որ չէր կամենում օգուտ քաղել նրանց ծառայութիւններից: Նրանք հնչեցնում էին կարող էին մի նոր յեղափո-խութիւն անել և Աբդուլ-Համիդի համար նոյն փառաները պատրաստել, որին ենթարկ-վեցաւ հանգուցեալ սուլթանը: Կատարաւոր-վածները կորուստը վաղուց վճռված էր

և նրանց սրտովը անպատճառ կը կատար-վի: Թիւրքիայի քաղաքական կեանքից այդ գործիչները անպատճառ կանհետանան և այդ կորուստը հազիւ թէ մէկը ափսոսայ:

Արդուլ-Ազիզի դատաստանական գործի վրա պէտք է այս իսկ տեսակետից նայել: Անձնականապէս դատաւարութիւնը այդ պա-լատականները ոչ ոքի համար հետաքրքիր չեն: Նրանք չափազանց մեծ չարիք պատ-ճառեցին Թիւրքիային, որ նշանաւոր ազ-գեցեալ թիւրքներն ունեցաւ Եւրոպայի քաղաքա-կան կեանքի վրա 1876 թուից մինչև այդ մարդկերանց անկումը: Նրանց կորուստը մասամբ կը հանգստացնէ Եւրոպային: Վերջ-նականապէս հանգստացած սուլթանը մի-ջոց կունենայ զբաղվել իր երկրի գործերով և զուգէ իր խորհրդատուներից այնպիսի մի մարդ կընտրէ, որ ընդունակ կը լինի կարգի բերել Թիւրքիայի խառնված գործե-րը: Երբ Արեւելքը հանգիստ է լինում, և Եւ-րոպական պետութիւններն էլ կարողանում են իրանց միջազգային գործերին աւելի ժամանակ նուիրել և պաշտպանել իրանց շահերը:

ՖԻՆԱՆՍԱՆ

Պատերազմական միջոցները կարգադրեց, որ ամբողջների շինութիւններին ոչ ոք ներ-կայ չը գտնվի բոլոր աշխատողներից և ֆրանսիական օֆիցերներէ: Ստանդարտ պէտք է առանձին լծողութիւն ստա-նան պատերազմական միջոցներից: «Հաւա-սի ընկերութիւնը» առկէ է հետեւեալ հա-զարդութիւնը: Տրիպոլի թիւրքաց նոր նա-հանգապետ Նազիֆ-փաշա, հասնելով Տրի-պոլի հէնց առաջին օրից զբաղվեցաւ պա-տերազմական ոյժերի կազմակերպութեամբ: Նա զօրակազմ է կատարում մինչև անգամ ֆրանսիական հիւպատոսի տան առաջ: Պա-տերազմական այդ պատրաստութիւնները առիթ են տալիս Տուրքիայի մէջ բնակվող ցե-ղերին ապստամբական ցոյցեր անել: Տրիպո-լի օւղարկված թիւրքաց զօրքերը բազմա-թիւ չեն, բայց արաբները լուր են տարա-ծում, որ նրանց թիւը հասնում է 50,000: Այդ զօրքերը, ինչպէս հաւատարմութիւն են

արաբները, պէտք է զբաւեն ոչ թէ մի-այն Տուրքիայ, այլ և Ալժիրի և այդ տե-ղերից պէտք է արտաքսեն ֆրանսիացիներ: Նազիֆ-փաշա բացի այդ կազմակեր-պում է անկանոն օգնական զօրքեր օտարա-նների և անպատաների մէջ բնակվող ցեղե-րից: Նորբերու նա մեծ զօրակազմ կատա-րեց, որին մասնակցեցին թիւրքաց կանո-նաւոր և արաբներից կազմված օգնական զօրքերը: Տրիպոլի մէջ կատարվող պատ-րաստութիւններից երեւում է, որ Թիւրքիան մտադիր է չը լծուլ տալ ֆրանսիայի դե-ռիշխանութիւնը Տուրքիայի վրա: Թիւրքաց նահանգապետը հրաժարվեցաւ հետեւել Տուրքիայի և ֆրանսիայի մէջ կապված դաշ-նագրութեան պայմաններին տունիցների հետ յարաբերութիւններ ունենալու ժամա-նակ: Այդ պատճառով ֆրանսիական հիւ-պատոսի գրութիւնը Տրիպոլի մէջ չափա-զանց դժուար է:

Հանրապետականները մինչև այժմ ուշա-դրութիւն չէին դարձնում Ալժիրիայի կա-ռավարիչ Ալբեր Կրեպի դէմ յարուցված զանգառների վրա: Ալբեր Կրեպի նշանակ-վեցաւ Ալժիրիայի կառավարիչ հանրապե-տականների ցանկութեան համեմատ, իսկ նրա հակառակորդները յետադիմականներն էին: Այդպէս խորհրդակցականների հա-մար բաւական էր և նրանք ուշադրութիւն չէին դարձնում Ալժիրիայի կառավարչի թե-րի գործունէութեան վրա:

Այժմ հանգամանքները փոխվել են: Հան-րապետական կուսակցութիւնը բաժանվել է երկու մասերի, որոնք մի քանի հարցերի ընթացքի մասին ժամանակ միմեանց ընդդիմա-դրում են և որոնցից մէկը ֆրանսիացի կուսակցներից է կազմված, իսկ միւրը Կրե-պի բարեկամներից: Կառմարտայի կուսակց-ները ամեն մի դէպքից օգուտ են քաղում իրանց հակառակորդներին մի անբաւաւա-նութիւն պատճառելու համար: Ալժիրիայի մէջ պատահած անցքերը մեծ առաւելու-թիւն են տալիս ֆրանսիացի կողմնակից-ներին և նրանք մի արշաւանք են սկսել Թիւրքիայի միջոցներով իրանց դէմ:

Եթէ Ալժիրիայի մէջ պատահող վըր-դովանքները և անկարգութիւնները շու-տով չը վերջանան, պատգամաւորների ա-պագայ ընտրութիւնների ժամանակ ֆրա-նսիական իր ձեռքին մի նշանաւոր դէպ-կանքնայ, որի օգնութեամբ նա կարող է յաղթել իր հակառակորդներին:

ԻՏԱԼԻԱ

Պահպանողական կուսակցութեան մի քա-նի նշանաւոր անդամները, ի նկատի առ-նելով Կեպրեմի միջոցառումները անկ-ման անհրաժեշտութիւնը, գիտեցին Սկլա-րին 130 պատգամաւորներից ստորագրված մի հետադրով, որի մէջ նրանք զանգաւ-վում են այժմեան միջոցառումների երկոտ փորձանքից ֆրանսիայի վերաբերութեամբ: Պաշտոնի մէջ ժողովրդական ցոյցերի ժա-մանակ ամբողջ կանչում էր «Թող կորչի անընդունակ միջոցառումները», թող կորչի Կառմարտայի կողմնակիցները: «Riforma» Լրագիրը խիստ քննութեան ենթարկեց ար-տաքին գործերի միջոցառումը պարլամենտին տուած մեկնութիւնը Մարսիլի մէջ պատա-հած անցքերի վերաբերութեամբ: Լրագիրը պնդում է, որ Մարսիլի մէջ սպանված ի-տալացիների թիւը կառավարութիւնը փոք-րացնում է ֆրանսիային հաճոյանալու հա-մար: Վենետիկի և մի քանի այլ փոքրիկ քա-ղաքների մէջ ֆրանսիայի դէմ ցոյցեր են պատահել, որոնք խաղաղութեամբ են վեր-ջացել: Վենետիկի մէջ շատ մարդիկ են կալանաւորված:

Իտալական պարլամենտը ընդունեց ըն-տրողական օրինակի 202 ձայների մե-ծամասնութեամբ 116-ի դէմ Իտալական զեպանք փոխելու մէջ հրաժարվեցաւ իր պաշտօնից: Նա կը վերադառնայ Իտալիա, որտեղ կը հրապարակէ իր գրադրութիւնը իտալական կառավարութեան հետ:

ՄԵՍԿԻ ԶԵՆԱԳԻՐՆԵՐ

ՄԵՍԿԻ ԶԵՆԱԳԻՐՆԵՐ

ԱՄԻՐ, 30 յունիս: Բու-Ամմ 1000 ա-րաբներից բաղկացած զօրաբաժնով յունիսի 26-ին երեք անգամ անաջող կերպով յար-ձակվեցաւ կրէյսերի վրա (նաւ), որ պաշտ-պանվում էր երեք խումբ հրացանածիգնե-րով: Ապստամբները փախան կորցնելով 250 մարդ:

Խմբագիր—հրատարակող ԳԻՐԿՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

մասերը և անուցանում են խաչներ և բնախի նը-ժողովներ:

Հաւթվանք անուն զեղեցիկ և երկարաձիգ հո-վաք ճանապարհորդի: հիացում է զրաւում, որի մէջ ծայրը Ալաշկերտի սահմանից է սկսվում: Ար-ան կարելի է անուանել Եփրատայի հովիտ: Արա-միջին ծանրագոյնայ լայնածաւալ հատում է եփ-րատը իր ծոցն ընդունելով: Մանազկերտի և Խը-նուսայ գետերը:

Եփրատը չրջում է երկու Բուլանքների մէջ, ձեղքելով Չայթախտայի նեղ ծորերը և կիրճերը: Իջնում է Մայ ընդարձակ դաշտը: Հաւթվանք հովիտում Հանանցի քրդեր են ապրում մօտ 250 վրան: Նրա մի փոքրիկ մասն է միայն հայոց ձեռ-քում: Մանազկերտը կարող է մօտ 3000 ընտանիք զաղթական ընդունել:

Մօտ տարիներում չեղբեղնակցի և կարտի դադ-թականներից 200 տուն բնակեցրին: Մանազկեր-տում և ներքին Բուլանքներում, որոնց հետ քրդ-զերը խիստ թշնամութեամբ են վարվում:

Ալժիրի քրդերից հանանցիք կը բնակվեն Մանազկերտում և ներքին Բուլանքներում, իսկ ձերբանցիք և սէյրանցիք մի մաս, մօտ 150 վը-րան, կը բնակեն ներքին Բուլանքներում:

Երկու Բուլանքները դատող Բէշման լեռը ան-տառու է և հինաւորեց քրդերի և շինութեանց աւերակներ ունի իր վրա: Բէշմանի ստորոտում դէպի Կոմի գիւղը մի լճակ կայ, խաչուայ ծով ա-նուն, ջուրը քաղցր է և մանր ձկնիկով լիք: Կու-րանցի վտակ դուրս գալով պտտացնում ջրա-ղացներ և ոռոգում է գիւղեր:

Այս երեք գաւառների գլուխ հայաբնակ և քրդ-զերի հետ խառն գիւղերի թիւն է . . . 159

Հայերի թիւ . . . 34,864

Վարժարաններ . . . 14

Աշակերտներ . . . 2616

Կոմիայ վանքի մէջ Միացեալ ընկերութիւնը, 20 աշակերտի համար, մի գիւղերի թիւն ունի: Բան է բացել:

Բնակիչները լու հայեր են, ազգային պայծառ ապագային համար հոգի և կեանք նուիրող և նրա յուսովը ապրող:

16.

Խ Ն Ո Ւ Ս

Խնուսը Վարդոյի, Բառնու, Մանազկերտի, վերին և ներքին Բուլանքների մէջ է, գիւղը լեռնային է, անի ընտիր դաշտային մասեր: Զուրն առատ, օդը զով և անման, հողն արգա-ւանդ: Գաւառապետն է Խնուսայ քրդը: Խնուսը առաջին մարդուց, Աղամայ և Եւայի հայերի, բնակարանն է կարծւում, որին սուրբ Գիւրքը գրախտ է անուանում: Խնուսայ գետը Բուլան-քի և ներքին Բուլանքից բղկում է և ուղեկող շատ գիւղեր Գարաջօրան գիւղի առաջին կանցի: Բուլանքն և կը խառնվի Եփրատին: Երասիի աղբիւրներն են այս գաւառի Բուլանքի և ներ-քին բղկում են, որ մի մեծ վտակ դառնալով, Թալմա գիւղի մօտէն իջնում է դէպի Բուլանք և Մէհրաբի գիւղեր և անցնում է Բառնու:

Այս գաւառի բոլոր լեռները նշանաւոր են իրանց առատ և բարեհամ ջրերով և արօտների: Բուլանքի և ներքին Բուլանքի իրաւունքով կարելի է Հայաստանի բոլոր լեռանց թագուհին անուանել: Բուլանքը խաչիք, անդալք և նոյնիցներ արա-ծում են նրանց վրա: Բուլանքը թափանցիկ վտակ միայն, աղբիւրներ խառնվում են նրանց կողերի վրա: Անթիւ գոյնգոյն սիրուն թռչունների տեսակները ճվլում են նրանց շուրջը: Բուլանքը և գետ անձանգ ծովիկների հազարադոյն տեսակ-ներ զարդարում են նրանց գլուխը, կուրծքը, թե-ւերը և անմահական հոտով անուշացնում են նրանց պայծառ միջոցները: Եւ այս ամենը ինչեղ-նում են հինաւորեց երկուն, Հնագոյն շինութիւն-ների գերբոլմեր սփռված են բոլոր այս գաւա-ռում: Բնակիչները առողջ, յաղթանաղամ և փեղ-ցիկ են:

Հայաբնակ գիւղերի թիւն է . . . 132

Հայերի թիւ	19,827
Քիւրդեր	7056
Զիւրանցի աշխարհ, հանանցիք և ջրբանցիք մի մասը: Այստեղ բնակվում են 80 տուն չէր-քեղներ և Զաղա կամ Տիւրքի կաշված սակաւ-թիւ և խեղճ քրդեր: Խնուս կարող է իր մէջ 1000 ընտանիք զաղթական ընդունել:	
Վարժարաններ	8
Աշակերտներ	296
Վ. Ե. Չ	
Ալժիրի կամ թափառական քրդերի ցեղերը երկու մասն են բաժանվում: մի մասը որ Մու-սուլայ և Տիւրքանկերտի կողմերից գալիս են գարնան և ամառվում են Մուլայ, Հատախու և Նորսուլայ կողմերը: միւս մասը Պարսկաստանի սահմանագիծից կը տարածվեն Արաբիայի դաշտի վրա Արաբիկ և Խոջաբայ կողմերը:	
Տիւրքանկերտի կողմից եկող Ալժիրի թիւերի անունները և թիւը:	
36 զանգուր	միայն
1 Շէֆանցիք	200 1200
2 Մահմանցիք	130 900
3 Սէյրանցիք	60 300
4 Զեռանցիք	100 600
5 Արաջանցիք	250 1500
6 Քաշանցիք	200 800
7 Գէվանցիք	100 600
8 Սիւլանցիք	150 900
9 Մալուանցիք	250 1500
10 Կճանցիք	350 2100
11 Խէրքանցիք	140 840
12 Տահանցիք	250 1500
13 Բալանցիք	50 300
14 Բալանցիք	150 900
15 Կարանցիք	200 1200
16 Միւրանցիք	300 1800
17 Սիւլանցիք	200 1200
18 Տիւրքանցիք	300 1800

19 Կարանցիք	150 900
20 Մանաքերանցիք	100 600
21 Ստրկանցիք	150 900
22 Շիտանցիք	150 900
23 Քարկիցիք	500 3000
24 Ռըշանցիք և Կիւրիք	160 960
25 Հաւթանցիք և Կիւրիք	400 2400
Գուլար	5010 28,440
Պարսկաստանի սահմանագիծից եկողներ	
26 Մուկուրցիք	300 2100
27 Թալուրցիք	150 950
28 Համապիք	400 2800
29 Մլանցիք	100 700
30 Շիւկ	150 1800
31 Հէյտարանցիք	200 1400
32 Լիւկիք	100 500
33 Եկիլիք	350 2500
Գուլար	1750 12,750
Վասպուրական նահանգի հետ առնե-լով Բուլանքները, Մանազկերտ և Խնուս գաւառները հայերի ամբողջ թիւն է	
Վասպուրական նահանգի հայոց թի-ւը առանձին	
Օտար ցեղեր բոլորը միասին	
Ասորիներ	
Քրդեր	
Թիւրքեր	
Եկիլիք	
Հրէաներ	
Մահմանական կրօնին պատկանեալ ազգեր	
Քրիստոնեաներ	
Բոլոր ազգերը միասին	
(Կը չարունակվի)	